

ԳՕԾԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆՆԵՐԸ. «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ»Ի ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ Զ. ԾԱՌԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ճշմարտութեան առջեւ մեղանշած չենք լինի, եթէ պնդենք, որ Գօշագիտութեան գոյացման ու զարգացման գործում «Բազմավէպ» ունեցել է առանցքային դերակատարում: Մխիթար վարդապետ Գօշի յայտնութիւնը թէ՛ հայ, եւ թէ՛ միջազգային գիտական հանրութեանը մեծապէս ապահովել է հէնց «Բազմավէպը»¹, իսկ Վահան Ծ. վարդապետ Բաստամեանցի հիմնարար աշխատանքից իմանում ենք, որ ոչ ուշ քան 1840ական թուականներին Վենետիկի Մխիթարեան հայրերը Գօշի ժառանգութեամբ զբաղուել են հիմնաւորապէս²:

Այսպէս, լիովին օրինաչափ է, որ Գօշագիտութեան նոր հորիզոնները հանրութեան առջեւ բացուեն հէնց «Բազմավէպ»ի էջերից: Իսկ որ նոր հորիզոններ բացելու, հայագիտութեան այդ ճիւղին նոր շունչ տալու կարիքն առկայ է, նոյնպէս համարում ենք անվիճելի: 1960-1980ականների բեղուն շրջանից յետոյ հայրենական Գօշագիտութիւնը, թւում է, յայտնուել է ճգնաժամի մէջ, իսկ դրա գրեթէ երկդարեայ մշակումի հետեւանքը՝ Մխիթար վարդապետ Գօշի (ԺԲ.-ԺԳ.) լայն հանրային ճանաչումը, չի յանգեցրել սպասուած արդիւնքին. հայկական երկու պետութիւններում ունենք «Մխիթար Գօշ» մեդալ, ունենք Մխիթար վարդապետի արձաններ ու կիսանդրիներ, Մխիթար Գօշի անունը յաճախ հրնչում է լսարաններում ու եթերներում, սակայն նրա գործն այդպէս էլ հասու չի դարձել հայ հանրութեանը³, նրա ուսմունքն այդպէս էլ

1 Ի սկզբանէ էին Հ. Ղ. Ալիշանի երեք յօդուածները «Բազմավէպ»ի 1848 թուականի թիւ 3, 8 եւ 10 համարներում:

2 Տե՛ս ԲԱՍՏԱՄԵԱՆՑ, Վ., Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ 1880, 108, թիւ 72 տողատակը:

3 Թերեւս այս է նաեւ պատճառը, որ Գօշին նուիրուած հեղինակաւոր գիտաժողովի ընթացքում հայ իրաւունքի պատմութեան վաստակաշատ պրո-

բոյն չի դրել հայ իրաւաբանների սրտերում⁴, եւ, առհասարակ, Միխիթար Գօշը, պատկերաւոր ասած, «վերածուել է» սոսկ մեղալի:

Ուստի Գօշագիտութեան նոր ալիքը պէտք է միտուած լինի ոչ միայն տարբեր բանասիրական, պատմագիտական, աղբիւրագիտական, աստուածաբանական, իրաւաբանական խնդիրներին լոյս սփռելուն, այլեւ այդ ամէնը հանրութեան լիարժէք սեփականութիւնը դարձնելուն: Այլ կերպ՝ պէտք է աչքաթող չանել «կիրառական Գօշագիտութիւնը»:

Իսկ «կիրառական Գօշագիտութեան» հորիզոնները նուաճելու գործը հարկ է սկսել նրա հիմնարար աշխատութիւնը՝ Դատաստանագիրքը, արդի հայերէնի որակեալ փոխադրելով⁵, ինչպէս նաեւ այն գլուխ առ գլուխ, յօդուած առ յօդուած խորութեամբ մեկնաբանելով: Մեր պատկերացմամբ, այդ գործը կատարելիս պէտք է առաջնորդուել հետեւեալ սկզբունքներով. փոխադրութիւնը պէտք է լինի ընկալելի առնուազն ժամանակակից իրաւաբանական մտածողութեան կրողների համար, իսկ մեկնաբանութիւնը, դրանից զատ, պէտք է հնարաւորինս խորը պատկերացում հաղորդի Գօշի ժամանակների աշխարհայեացքային, մշակութային, քաղաքական, իրաւաբանական, կրօնական, աստուածաբանական համատեքստի մասին, բացայայտի Գօշի իրաւաբանութեան նորարարական մեթոդը, վեր հանի Դատաստանագրքի ներքին համակարգային կապերը, հնարաւորինս մատչելի ձեւով բացատրի Գօշագիտութեան չլուծուած հարցերն ու առաջ քաշի ընդունելի լուծումներ:

Փետրը կարծիք է յայտնում, որ Միխիթար վարդապետը հոգեւոր իշխանութիւնն աշխարհիկից աւելի բարձր է դասել, քանի որ ազդուած է եղել մահմեդական իրաւական գաղափարներից:

4 Այս հանգամանքի ցուցիչն էլ թերեւս այն է, որ Հայաստանի փաստաբանների պալատի շէնքի մակատին տեղադրում է Գօշի կիսանդրին՝ նրան վերագրուած խօսքի առընթեր փորագրութեամբ, մինչդեռ մէջքերման հեղինակը Գօշը չէ:

5 2000ականներին կատարուել է երեք փոխադրութիւն, որոնք ցաւօք հեռու են կատարեալ լինելուց: Կարծում ենք՝ 1954 թուականին լոյս տեսած ռուսերէն եւ 2000ին՝ անգլերէն թարգմանութիւններն աւելի որակեալ են: Տե՛ս *Армянский судебник Мхитар Гоша*, իմբ. ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ, Բ. Մ., Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան 1954, 270 էջ, եւ *The Lawcode [Datastanagirk'] of Mxit'ar Goš*, Translated with Commentary and Indices by THOMSON R., Editions Rodopi, Amsterdam – Atlanta, GA 2000, 359 էջ:

Որպէս մեթոդական օրինակ՝ յանձն ենք առել կատարել Նախադրութեան առանձին գլուխների (ճառերի) բազմակողմանի մեկնաբանութիւն, եւ ընթերցողի դատին ենք յանձնում թերեւս ամենաքննարկուած ճառերից մէկի՝ Զ. ճառի մեկնաբանութիւնը: Իբրեւ սկզբնաղբիւր օգտագործել ենք Խոսրով Թորոսեանի հրատարակած քննական բնագիրը (Ա. խմբագրութիւն)⁶:

ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ Զ. ՀԱՌԸ

Նախադրութեան վեցերորդ ճառով սկիզբ է առնում զուտ իրաւական բովանդակութիւն ունեցող գլուխների եռեակը, որոնք խտացուած ձեւով արտացոլում են Գօշի բուն իրաւաբանութիւնը:

Զ. ճառը կազմուած է երկու հատուածից. ա) դատարանին ուղղուած ցուցումներ (դատական սկզբունքներ), եւ բ) դատավարութեան կողմերին ուղղուած ցուցումներ⁷: Այսպէս, չնայած տեքստում կառուցուածքային առերեւոյթ մասնատումների բացակայութեան՝ Մխիթար Գօշն այստեղ եւս շարունակում է հաւատարիմ մնալ կառուցուածքայնութեան իր բարձր նշաձողին:

Մխիթարի ընտրած իրաւակարգաւորման մեթոդաբանութիւնը զարգացած իրաւամտածողութեան արդիւնք է: Ժամանակակից իրաւունքում յաճախ են պատահում նոյնաբնոյթ կարգաւորումներ, երբ օրէնսդիրը, նախ, սահմանում է իրաւայարաբերութեան մի մասնակցի (սուբյեկտի) իրաւունքները կամ լիազօրութիւնները, եւ որպէս դրանց կենսագործման երաշխիք՝ անմիջապէս սահմանում է նաեւ տուեալ իրաւայարաբերութեան միւս մասնակիցների «թղթակցող» պարտականութիւնները⁸:

6 Տե՛ս ՄԽԻԹԱՐ ԳՕՇ, Գիրք դատաստանի, աշխ. ԹՈՐՈՍԵԱՆ, Խ., Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան 1975, 1-154:

7 Ի տարբերութիւն ժամանակակից իրաւամտածողութեան՝ Գօշի ժամանակներում հիմնադրոյթներն առանկապէս կրում էին պարտաւորեցնող ու արգելող, այլ ոչ թէ իրաւումք ֆանաչող կամ սահմանող բնոյթ: Այդ տարբերութիւնը պայմանաւորուած է Ի. դարի կէսերից իրաւական արժեհամակարգում «մարդու հիմնարար իրաւունքների» գերակայութեան հաստատմամբ:

8 Օրինակ՝ տե՛ս ՀՀ քրեական դատավարութեան 2021ի օրէնսգրքի (այսուհետ՝ ՔՐԴՕ) 110րդ յօդուածը (քոյր օրէնսդրական ակտերի սկզբնաղբիւրն է պաշտօնական www.arlis.am կայքէջը). օրէնսդիրը նախ սահմանում է ձեռքակալուածի իրաւունքները, ապա մէկ առ մէկ թուարկում է դրանց

Գօշը վարւում է նոյն կերպ. նախ, սահմանում է դատական սկզբունքները, ապա՝ դատավարութեան մասնակիցների «թղթակցող» պարտականութիւնները, որոնք ունեն երաշխիքային բնոյթ եւ կոչուած են ապահովել սկզբունքների արդիւնաւէտ կենսագործումը:

Ա.- Զ. ՃԱՌԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

1.- Անկաշառութիւն

Զ. ճառի առաջին հատուածը սկսելով դատական սկզբունքների շարադրմամբ՝ Մխիթարը դրանց թւում առաջինն անդրադառնում է անկաշառութեանը: Դատական գործերում կաշառքի բացառումն ու այդ արատի դէմ պայքարը Գօշի համար ունի անկիւնաքարային նշանակութիւն: Անկաշառութեան սկզբունքը կարմիր թելով անցնում է ողջ դատաստանագրքում. սկսած Նախադրութեան Բ. ճառում ամրագրուած՝ այդ գիրը շարադրելու հիմնարար պատճառներից (պատճառ թիւ 8) մինչեւ բուն դատաստանագրքի առանձին դրոյթները⁹: Այս սկզբունքը Մխիթարի համար ուղիղ կապուած է, մի կողմից, արդարութեան՝ աւելի լայն իրաւական սկզբունքին, իսկ միւս կողմից, օտար դատարաններին դիմելը կանխելու ազգային-քաղաքական գաղափարին: Ընդ որում, «մի՛ զանձին խնդրեսցէ զօգուտ» ձեւակերպմամբ Գօշն ընդլայնում է այս սկզբունքի ծաւալը՝ բացառելով դատաւորի կողմից ցանկացած այլ շահի հետապնդումը՝ բացի արդարադատութեան շահից: Հետաքրքիր է «զմիտս բազմաց յիմքն յանգուսցէ» ձեւակերպումը. մեր կարծիքով, այստեղ Մխիթարը սաղմնային ձեւով արտայայտում է այն միտքը, որ միայն անկաշառ լինելու դէպքում է, որ դատաւորը կարող է «բազմաց մօտ» վաստակել հեղինակութիւն ու յարգանք:

2.- Անկարեկցութիւն

Յաջորդիւ Գօշն անդրադառնում է դատարանի անկողմնակալութիւնն ապահովող մէկ այլ սկզբունքի՝ կարեկցանքի հանդէպ նշմարտութեան գերակայութեանը՝ փաստացի ձեւակերպելով դատա-

արդիւնաւէտ իրացման երաշխիք հանդիսացող՝ ձերբակալողների «թղթակցող» պարտականութիւնները:

9 Տե՛ս բուն դատաստանագրքի 3րդ, 38րդ, 48րդ, 128րդ, 138րդ, 213րդ, 246րդ յօդուածները:

րանի առջև բոլորի հաւասարութեան գաղափարը¹⁰: Այստեղ առկայ է թուացեալ հակասութիւն կարիքաւորների հանդէպ ողորմութիւն դրսեւորելու քրիստոնէական ուսմունքի եւ ճշմարիտ վճիռ արձակելու դատաւորի պարտականութեան միջեւ¹¹, ուստի Միխիթարը ստիպուած է ելից գրքում շարադրուած Աստծոյ պատուիրաններից մէկի՝ դատելիս աղքատին չխղճալու պահանջի վերկայակոչմամբ ցոյց տալ իր մօտեցման իրաւաչափութիւնը: Աւելին, նա մէջբերում է այդ գաղափարին թուացեալ հակասող՝ Շասայի մարգարէի գրքում շարադրուած պատուիրաններից մէկը՝ ակնարկելով սակայն, որ այն վերաբերում է այրուն ու որբին իրաւաչափ արդարութիւն, այլ ոչ թէ յանիրաւի առաւելութիւն տրամադրելուն¹²: Այնուամենայնիւ, քրիստոնէական ողորմածութեան գաղափարը բարձր պահելու նկատառումով Գօշը դատաւորներին յատուկ պարտաւորեցնում է կարողներին յորդորել ողորմածութեամբ գործել անկարողների նկատմամբ:

3.- Երկու կողմերի լսում

Դատական սկզբունքների շարքում երրորդը շարադրուած է երկու կողմերին լսելու պահանջը¹³: Այն ունի թէ՛ դատարանի ան-

10 Եթէ այստեղ խօսքը վերաբերում է աղքատներին յանձնարարելու առաւելութիւն տալու արգելելուն, ապա բուն դատաստանագրքի 38րդ յօդուածում արգելում է նաեւ ճիշտ հակառակ իրավիճակը՝ իշխանին աղքատի հանդէպ յանձնարարի առաւելութիւն տալը:

11 Բ. խմբագրութիւնն աւելի յստակ է ձեւակերպում այդ հակադրութիւնը՝ ներմուծելով ողորմութեամբ հակակշռող «ուղղորդ» բառը՝ «ուղիղ, ճշմարիտ [վճիռ]» իմաստով. «Եւ թեպէտ յամենայն իրս ողորմութիւն լաւագոյն է, բայց ի դատաստանս ուղղորդն է պատշաճ»: Հարկ է նկատել, որ Խաչիկ Սամուէլեանը թերեւս համատեքստից դուրս է մեկնաբանում «ուղղորդ» բառը՝ այն հասկանալով «ուղղիչ» իմաստով ու հակադրելով «պատժիչ»ին. տե՛ս ՍՍՄՈՒԷԼԵԱՆ, Խ., Միխիթար Գօշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրաւունքը, Վիեննա 1911, 109-110: Իսկ Ալեքսեյ Սուֆիասեանն «ուղղորդ» բառին տալիս է ճշգրիտ մեկնաբանութիւն. տե՛ս ՍՈՒՓԻԱՍԵԱՆ, Ա. Գ., Միխիթար Գօշը եւ «Հայոց դատաստանագիրքը», «Միտք» հրատարակչութիւն, Երեւան 1965, 169:

12 Ել իգ, 3-ում խօսուում է ոչ թէ որբի ու այրու, այլ աղքատի մասին: Միխիթարը փոքր-ինչ խմբագրել է բնագրի տեքստը՝ թերեւս Շս Ա, 17-ի հետ ներդաշնակեցնելու նկատառմամբ:

13 Այս հարցում եւս Բ. խմբագրութիւնն աւելի յստակ է ձեւակերպում միտքը՝ օգտագործելով «ոստի» բառը՝ նկատի ունենալով կողմերից իւրաքանչիւրին: Բացի այդ օգտագործում է «[...] երկուսն ղէմ ընդ ղէմ» միմեանց լիցին» (չեղատառը մերն է) ձեւակերպումը, որն աւելի յստակ է, քան Ա.

կողմնակալութիւնն ապահովելու եւ թէ՛ կողմերին լսուած լինելու հնարաւորութիւն տրամադրելու նշանակութիւն: Այս գաղափարը յայտնի էր ինչպէս Հին Յունաստանում (օրինակ՝ Եսքիդէսի «Եւֆեմիդներ» եղերախաղում (դրամա). տող 431)¹⁴ ու Հին Հռոմում (Audi alteram partem)¹⁵, այնպէս էլ իսլամական իրաւունքում: Ժամանակակից իրաւունքի դատավարական ճիւղերում այն ունի հիմնարար նշանակութիւն՝ որպէս օրէնքի եւ դատարանի առջեւ հաւասարութեան սկզբունքի բաղադրատարր¹⁶: Մխիթարի ձեւակերպած հիմնադրոյթը սաղմնային ձեւով արտացոլում է նաեւ ժամանակակից քրէական դատավարութիւնում արմատաւորուած «հակընդդէմ հարցման» գաղափարը¹⁷:

Ամբաստանեալին լսելու՝ դատաւորի պարտականութեանն է առնչուում «Յամմտից ոֆ եւ յունապի» թիւ ԺԸ. առակը, որում «անընտրող» ձեւով դատող դատաւորներին Գօշը յանդիմանում է այն բանի համար, որ նրանք դատը կատարում են առանց քննութիւն կատարելու՝ սոսկ ելնելով դատուողի տեսքից ու համբաւից¹⁸:

խմբագրութիւնում օգտագործուած «ի միասին կատարելապէս քննեցի» արտայայտութիւնը:

- 14 Աթենաս աստուածուհին պնդում է, որ մեղադրողներից յետոյ լսուի մասն ամբաստանեալը՝ Աթէնի դատարանի առջեւ կանգնած Ուրեստէսը: Նրան լսում են (446-472 տողեր) եւ արդիւնքում՝ արդարացնում (տող 755):
- 15 Լատիներէնից թարգմանաբար նշանակում է՝ «լսի՛ր միւս կողմին»: Այն համարում է հռոմէական իրաւունքի հիմնարար սկզբունքներից մէկը:
- 16 Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ 2018ի սահմանադրական օրէնքի 34րդ յօդուածը, ՀՀ վարչական դատավարութեան 2013ի օրէնսգրքի (այսուհետ՝ ՎԴՕ) 6րդ յօդուածը, ՀՀ ՔրԴՕ 21րդ յօդուածի 3-4րդ մասերը, ՀՀ Բաղաձայնական դատավարութեան 2018ի օրէնսգրքի (այսուհետ՝ ՔադԴՕ) 11րդ յօդուածի 2րդ մասը: Մարդու իրաւունքների եւրոպական իրաւունքում այս սկզբունքը կրում է equality of arms («զէմքերի հաւասարութիւն») անուանումը:
- 17 Տե՛ս Մարդու իրաւունքների եւրոպական կոնվենցիայի 6րդ յօդուածի 3(d) ենթակէտը, ինչպէս մասն ՀՀ ՔրԴՕ 43րդ յօդուածի 1ին մասի 10րդ կէտը:
- 18 *ՄԻՆԻՓԱՐ ԳՕՇ*, խմբ. ԲՈԶՈՅԵԱՆ, Ա., *Մատենագիւղի Հայոց, մատենաշար, Ի. հատոր, ԺԲ. դար, գիւղ Բ.*, Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարան – Հայկական Մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրամ, «Նաիրի», Երեւան 2014, 48:

4.- Ապացուցում

Չորրորդը շարադրուած է պատշաճ ապացուցման սկզբունքը: Այն ընդամէնը բացայայտում է դատական ապացուցման կիրառելի համայնապատկերը: ապացուցումը կատարուում է երկու կամ երեք վկաներով, իսկ դրանց բացակայութեան դէպքում՝ միւս կողմի երդմամբ: Մանրամասների համար յղում է կատարուում ծաւալուն է. եւ Ը. ճառերին, որոնցում յաջորդաբար անդրադարձ է արուում ապացույցների այդ երկու հիմնական տեսակներին: Մխիթարը չի շեղուում միջնադարին բնորոշ ապացուցողական իրաւունքից, որ չէր ճանաչում ո՛չ ապացույցների ազատ գնահատման եւ ո՛չ էլ անմեղութեան կանխավարկածի գաղափարները: Չնայած յղմանը, Գօշն իր պարտքն է համարում այստեղ եւս յստակ ընդգծել, որ երդման երեւոյթն ինքնին հակասում է օրէնքին, եւ այն սոսկ սովորութային իրաւունքի արգասիք է¹⁹:

5.- Երաստութիւն

Հինգերորդ սկզբունքը՝ երաստութիւնը (կոլեգիալութիւնը), հետազօտողների առաւել մեծ ուշադրութեանն արժանացած հատուածն է Զ. ճառում: Այն հիմնուած է Նախադրութեան է. ճառում արտայայտուած այն գաղափարի վրայ, որ դատական իշխանութեան կողմ եպիսկոպոսները դատը պէտք է վարէին «գործակցօք [...]՝ աշխարհականօք եւ քահանայիւք եւ վարդապետօք փորձագունիւք»:

19 Այս հարցում Ա. եւ Բ. խմբագրութիւնների միջեւ առկայ է նուրբ, բայց կարեւոր տարբերացում. եթէ Ա.-ում առաջին դէմքով նշուած է, որ հեղինակը երդման համար կանոններ ու ապաշխարութիւն է սահմանում («սահմանեմք»), ապա Բ.-ում դա վերափոխուած է հետեւեալ կերպ. «մեք կամեցաք [երդումն] ի սահմանս եւ ի կանոնս ապաշխարութեան ածել»: Այլ կերպ՝ Ա. խմբագրութիւնում հեղինակն իրեն վերապահում է *կանոններ սահմանելու իրաւունքի*, մինչդեռ Բ.-ում նա ընդամենը յայտնում է իր մտադրութիւնը՝ ցոյց տալու *արդէն իսկ եղած* կանոնների կիրառելիութիւնը տուեալ «երդման» նկատմամբ: Կարծում ենք, սա եւս մի ապացոյց է յօգուտ այն վարկածի, որ Բ. խմբագրութիւնն Ա.-ի վերամշակուած ու սրբագրուած տարբերակն է, քանի որ, նախ, Մխիթար Նախադրութեան Բ. մասում ինքն է տարանջատում «դատաստանը» «կանոնից»՝ զերծ մնալով կանոնական իրաւունքի դաշտ մտնելուց, քացի այդ, եթէ անգամ նա յոյս ունենար դատաստանագիրքը դարձնել կանոնական իրաւունքի մաս, ապա նրա միջավայրում դա չէր կարող ընդունելի համարուել:

Այստեղ Մխիթարը յստակեցնում է այդ պաշտօնեաների թիւը՝ երկու կամ երեք, եւ սահմանում է նրանց գործառնութները՝ ա) մասնակցել վճռի կայացմանը²⁰, բ) հաւաստել դատավարութեան ու վճռի արդարացիութիւնը²¹, եւ գ) նպաստել դատաւորի որակաւորման բարձրացմանը: Երկրորդ գործառնութը նկատի առնելով՝ «երկու կամ երեք» թիւը դառնում է լրիւ հասկանալի: Գօշը փաստօրէն համանմանութիւն (անալոգիա) է կիրառում կողմերի պընդումները հաստատող վկաների հետ, եւ դատական այս պաշտօնեաներին ըստ էութեան դիտարկում է վկայի սուրբգրային ընկալման տիրոյթում:

Երաստութեան (կոլեգիալութեան) կարեւորութիւնը ցոյց տալու համար Մխիթարը բերում է հռոմէացիների, յոյների եւ վրացիների օրինակները: Առաւել հետաքրքրական է հռոմէացիների օրինակը: Ո՛չ հին եւ ո՛չ էլ նոր հետազօտողները չեն կարողացել վկայակոչել, թէ ի՛նչ աղբիւրներից է օգտուել Գօշը կամ ի՛նչ է նկատի ունեցել հռոմէացիների մօտ 72 դատաւորների մասին իր միտքը շարադրելիս: Մեր կարծիքով, Մխիթարը նկատի է ունեցել ոչ թէ Հին Հռոմը, այլ խաչակիրների հիմնած պետութիւններն ու առաջին հերթին Երուսաղէմի թագաւորութիւնը²²: Անուղղակիօրէն դրա մասին է վկայում «Եւ եւթանասուն եւ երկուս ըստ

20 Համաձայն եեմ իս. Սամուէլեանի եւ իս. Թորոսեանի այն դիտարկմանը, որ այս պաշտօնեաներն ունեին միայն խորհրդակցական ձայնի իրաւունք: Տե՛ս ՍԱՄՈՒԷԼԷԱՆ, իս., *Մխիթար*, նշ. աշխ., 132-136, ԹՈՐՈՍԵԱՆ, իս., *Դատարանն ու դատաստանը Հայաստանում X-XIII դդ.*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան 1985, 171-172:

21 Առաջինն այս գործառնոյթը վկայակոչել է Նոգեֆ Քարստը. տե՛ս KARST, J., *Sempadischer Kodex aus dem 13. Jahrhundert oder mittelarmenisches Rechtsbuch, zweiter Band: Kommentar*, Verlag von Karl J. Trübner, Strassburg 1905, 362: Անհամաձայնութիւն յայտնելով Քարստի մեկնաբանութեանը՝ Թորոսեանը գտնում է, որ այս գործառնոյթի փոխարէն այդ դատական պաշտօնեաներն ունեին ինքնին դատավարութեան եղելութեան ու վճռի կայացման փաստը հաւաստելու գործառնոյթ՝ նկատի ունենալով այն, որ դատական վարոյթները, որպէս կանոն, գրաւոր արձանագրում չէին ստանում: Տե՛ս ԹՈՐՈՍԵԱՆ, իս., *Դատարանն*, նշ. աշխ., 170-171: Մեր կարծիքով՝ Մխիթար թերեւս նկատի է ունեցել փաստի հաւաստման գործառնոյթը եւս, սակայն այն չի բացառում արդարացիութեան հաւաստման գործառնոյթը, աւելին՝ հանդիսանում է դրա տրամաբանական հետքը:

22 Այս վարկածին ընդհուպ մօտեցել էր դեռ Վ. Բաստամեանցը. տե՛ս ԲԱՍՏԱՄԵԱՆՅ, Վ., *Մխիթարայ*, նշ. աշխ., 140-143:

լեզուաց ընտրեմ ազգաց, իբրու այն, եթէ զամենայն ազգաց ունել իմաստութիւնն նոքոք» արտայայտութիւնը (չեղատառը մերն է). հռոմէական կայսրութիւնում դա ոչ միայն անիմաստ էր, այլեւ անհնար: Իսկ Երուսաղէմի թագաւորութիւնը խայտաբղէտ էր բնակչութեան ազգային-կրօնական կազմով, եւ այդ պետութեան առանձնայատկութիւնների հաշուառմամբ՝ Մխիթարի վկայակոչած դրոյթը լիովին տրամաբանական է թւում²³: Երուսաղէմի համար տրամաբանական է նաեւ 72 թիւը. այն նոյնական է Հրէական իրաւունքի ներքոյ Երուսաղէմում գումարուող դատական մարմնի՝ Սինեդրիոնի անդամների թուին, որն ունէր Աստուածաշնչեան սկզբնաղբիւր²⁴:

6.- Բարեվարքութիւն

Վեցերորդ դատական սկզբունքը բարեվարքութիւնն է: Այն ձեւակերպուած է հետեւեալ բաղադրիչներով. ա) դատաւորի մըշտական մասնագիտական ինքնակատարելագործում, բ) դատաւորի վարքագծի համապատասխանեցում նրա բարձր դիրքին, եւ գ) արդար վճիռ կայացնելու առաքելութեան գերակայութիւն արագութեան նկատմամբ:

Բարեվարքութեան գաղափարը նոր-նոր է մուծւում հայրենական իրաւաբանութեան համակարգ²⁵, սակայն դրա առանձին տարրեր ունեն շատ աւելի տեւական պատմութիւն: Կարծում ենք՝ Մխիթարի նշուած մտայաղուցումները պէտք է հասկանալ ու դիտարկել հէնց բարեվարքութեան ընդհանուր գաղափարի տիրոյթում:

ա) Դատաւորի մշտական մասնագիտական ինքնակատարելագործմանը՝ Գօշը մեծագոյն կարեւորութիւն է տալիս. այդ մասին

23 Տեղին է յիշատակել, որ «Թուղթ առ Վրացիսն...»-ում Գօշը նշում է, որ աշխարհի բոլոր ազգերի (լեզուների) ընդհանուր թիւը 72 է: Տե՛ս Մխիթ.ԱՐ ԳՕՇ, Մատենագիրք, նշ. աշխ., 471:

24 Տե՛ս Թւ ժա, 16. նշուած 70ին պէտք է յաւելել Մովսէսին ու Ահարոնին:

25 Առաւել յաջող է թւում «բարեվարքութիւն» հասկացութեան սահմանումը «Հանրային ծառայողի տիպային վարքագծի կանոնների» 12(3) ենթակէտում. «ընդհանուր էթիկական արժեքներին, սկզբունքներին եւ նորմերին համապատասխան գործունէութիւն եւ դրանց պահպանում, որի նպատակն է ամրապնդել մասնաւոր շահերի նկատմամբ հանրային շահի գերակայութիւնը եւ պաշտպանութիւնը պետական համակարգում» (հաստատուած է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման յանձնաժողովի 17.06.2022թ. 01-Ն որոշմամբ):

է վկայում «[ի] գիշերի եւ ի տուրնջեան [...]» արտայայտութիւնը: Այս բաղադրիչը ներառում է ինչպէս գրքերի ընթերցանութիւնը²⁶, այնպէս էլ բանաւոր իմաստութեան «որսը»։ Ընդ որում, Մխիթարը դատաւորներին յորդորում է այլ ոլորտների գիտելիքն օգտագործել համանմանութեան (անալոգիայի) կարգով:

բ) Դատաւորի բարձր դիրքին նրա վարձագծի համապատասխանեցումը, վերաբերում է դատաւորի վարձագծին՝ ինչպէս դատական գործառոյթ կատարելիս, այնպէս էլ հանրութեան առջեւ այլ դերակատարում իրականացնելիս²⁷։ այդ մասին է վկայում «մաւաւանդ՝ ի ժամ դատաստանի» արտայայտութիւնը: Բարեվարքութիւնն այստեղ ուղղակիօրէն կապւում է առաքինութիւնների մշտական կատարելագործման հրամայականի հետ՝ յատուկ ընգծելով հանդարտութիւնը պահպանելու, յուզականութիւնը զսպելու յորդորը²⁸: Գօշն այստեղ դատաւորներից պահանջում է լինել «նեւրողք», մինչդեռ վերը մեկնաբանուած երկրորդ սկզբունքի ներքոյ՝ ողորմածութիւնը համարում է անթոյլատրելի: Մեր կարծիքով՝ հակասութիւնն այստեղ թուացեալ է, քանի որ բանակարգը (համատեքստը) հաշուի առնելով՝ վերեւում Մխիթարն անդրադառնում է դատավարութեան եզրափակիչ արդիւնքին, իսկ այստեղ՝ ընթացքին:

գ) Արագութեան նկատմամբ արդարութեան գերակայութիւնը, մեր կարծիքով, նոյնպէս պէտք է դիտարկել բարեվարքութեան տիրոջութւմ, քանի որ արդարութեան հաշուին ժամանակի խնայողութիւնը հանրային շահի նկատմամբ դատաւորի մասնաւոր շահի գերակայութեան դրսեւորում է:

26 Բ. խմբագրութիւնում «քննարանական»ի փոխարէն օգտագործւում է սոյն «գտուրք գիրս կտակարանաց» արտայայտութիւնը: Թւում է՝ սա խմբագրական ուղիղ միջամտութիւն է Գօշի սկզբնական մտքի նկատմամբ, որ թերեւս ընկալուել է որպէս անթոյլատրելի շեղում գոյութիւն ունեցող աշխարհընկալման հիմունքներից:

27 Ներկայումս համատարած է դատաւորների բարոյական (էթիկայի) կանոնների բաժանումը նշուած երկու մասերի, որոնցից իւրաքանչիւրն ունի ուրոյն տրամաբանութիւն: (ՀՀ դատաւորի էթիկայի կանոնները՝ հաստատուած ՀՀ դատաւորների ընդհանուր ժողովի 21.12.2018թ. 05-Լ որոշմամբ):

28 Այստեղ Մխիթար մօտենում է արդի այն գաղափարին, որ անկողմնակալ լինելու հետ մէկտեղ՝ դատարանը պէտք է նաեւ *երեւայ* անկողմնակալ: Տե՛ս, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 15րդ յօդուածի 3րդ մասը:

7.- Կարգուկանոնի ապահովում

Գօշը յաջորդիւ անդրադառնում է կարգուկանոնի ապահովման սկզբունքին: Այստեղ Զ. ճառում առաջին անգամ պարտականութիւններ են դրւում ոչ միայն դատաւորի, այլեւ կողմերի վրայ. դատաւորը կարգուկանոնի ապահովման անմիջական պատասխանատուն է, եւ նա պէտք է անմիջապէս խափանի լեզուակռիւններն ու ապահովի հերթով խօսելու՝ կողմերի հնարաւորութիւնը, իսկ կողմը հակառակորդի խօսելու ժամանակ պէտք է պահպանի լռութիւն: Յատուկ յորդոր է ուղղւում հայցուոր կողմին՝ դատարանը չդարձնել վիճաբանութեան թատերաբեմ, այլ վճռին սպասելիս՝ պատասխանողի նկատմամբ դրսեւորել կարեկցանք:

Մխիթարը հարկ է համարում բացատրել այս սկզբունքի կիրառական նշանակութիւնը. այն մի կողմից ուղղուած է արդարադատութեան խափանում թոյլ չտալուն («մի՛ ամբոխ լիցի ... պատճառ խափանման դատաստանին»), իսկ միւս կողմից՝ վճռի արդարութիւնն ապահովելուն («[...] զի ստուգել մշմարտին՝ վնիռ նովաւ քերցի»):

Կարգուկանոնին վերաբերող հարցերի յատուկ կարեւորումը թոյլ է տալիս ենթադրել, որ դատաւորների առջեւ կողմերի լեզուակռիւններն ու անհնազանդ վարքագիծը լայնօրէն տարածուած երեւոյթ էին²⁹, ուստի Մխիթարը դժուար թէ բաւարարուէր սոսկ վերը նշուած դրոյթների ձեւակերպմամբ եւ յատուկ անդրադարձ չկատարէր անհնազանդների նկատմամբ խափանման ու պատժի միջոցներին:

Դատաստանագիրքն այս տեսանկիւնից դիտարկելով՝ ենթադրում ենք, որ մտրակման պատժամիջոցն ամրագրող 130րդ յօդուածում խօսքը վերաբերում է հէնց դատաւորի առջեւ անհնազանդ վարքագիծ դրսեւորելուն: Այդ մասին է վկայում նշուած յօդուածում օգտագործուող «Յատեան դատաստանի [...]» ձեւակերպումը, ինչպէս նաեւ այն դրոյթը, որ «Արժան է դատաւորաց վարիլ նովաւ ի խրատ ստահակաց» (չեղատառը մերն է). այսինքն՝ մտրակումը կիրառելի էր յատկապէս անհնազանդների նկատմամբ: Դատաստանագրքում «ստահակ» բառը կիրառւում է միայն երկու անգամ. միւսը Զ. ճառի՝ բանտի մասին հատուածում է. «Բանտ

29 Խ. Թորոսեանի դիտարկմամբ՝ դատարաններում կռիւները պէտք է որ յաճախ պատահէին, քանի որ դատաւորին էին հասնում միայն արտադատական կարգով լուծում չստացած գործերը, իսկ կողմերը դատարան էին գալիս բազմաթիւ ազգականներով. տե՛ս ԹՈՐՈՍԵԱՆ, Խ., *Դատարանն*, մշ. աշխ., 204:

լինել դատաւորին առ ի խրատել նոյն *գստահակս*³⁰ (չեղատառը մերն է): Այսպէս, բանտի վերաբերեալ Ձ. ճառի հատուածը թերեւս պէտք է դիտարկել կարգուկանոնի ապահովման սկզբունքի ներքոյ³¹ մտրակումն ու բանտարկութիւնը դիտարկելով որպէս կարգուկանոնն ապահովելուն ուղղուած գործուն միջոցներ³²:

Այս հատուածում կատարուած սուրբգրային յղումը³³ թերեւս ունի միայն մէկ նպատակ. ցոյց տալ, որ բանտային հաստատութիւնն ինքնին ունի Գրիստոսի խօսքից բխող իրաւակարգութիւն (լեգիտիմութիւն):

8.- Պատասխանատուութիւն

Վերջին՝ ութերորդ սկզբունքը դատաւորի անձնական պատասխանատուութիւնն է: Այն ունի հետեւեալ բաղադրիչները՝ ա) դա-

30 Մեր կատարած դիտարկման լոյսի ներքոյ՝ «*գստահակ*» եզրոյթը համադրելի է ժամանակակից իրաւունքին յայտնի «*խուլիգանութիւն*» հասկացութեանը:

31 Դեռ Վ. Բաստամեանցն էր նկատել, որ քանտարկութիւնը Միխայիլի համար ոչ թէ պատժի ու վրէժխնդրութեան, այլ «խրատական եւ ուղղեցուցիչ» միջոց է. տե՛ս ԲԱՍՏԱՄԵԱՆՑ, Վ., *Միխայիլ*, նշ. աշխ., 150-151: Յատկանշական է նաեւ, որ Ձ. ճառի այդ հատուածը եզրափակւում է վեճը դատարան չհասցնելու ու դատարանի մանապարհին հաշտուելու մասին դրոյթով՝ «զի մի՛ հակառակ ինչ պատահիցի»:

32 Հարկ է նկատել նաեւ, որ դատական մտրակումն ու քանտարկութիւնը մօտ են ժամանակակից իրաւունքում արմատացած «դատական սանկցիաների» տարերբ (ինստիտուտին): Համաձայն ՀՀ 2018ի դատական օրէնգրքի 47-րդ յօդուածի 1ին մասի՝ «Դատական սանկցիան կիրառուում է դատական իշխանութեան հեղինակութիւնը պաշտպանելու, ինչպէս նաեւ դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով»: Տե՛ս ՀՀ դատական օրէնգրքի 47-50-րդ, ՀՀ ՎԴՕ 101-101.2, ՀՀ ՔԴՕ 141-147-րդ, ՀՀ ՔաղԴՕ 153-155-րդ յօդուածները:

33 Ուշագրաւ է Ղուկասի Աւետարանի այս հատուածի՝ Իգմատիոս Սեւեռնեցու մեկնութիւնը. «զի խրատել իրաւախոհ լինիլ ընդ ոսոխին եւ հաշտիլ, եւ ո՛չ գնալ թշնամութեամբ ընդ մմա առաջի դատաւորաց, զի մի՛ իբրեւ *գխտովարարս* կապեալ արկանիցին ի քանո» (տե՛ս ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՆՈՅՑԻ, *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու*, Կոստանդնուպոլիս 1824, 228): Նկատելի է ակնյայտ զուգահեռ՝ կարգուկանոնի ապահովմանը վերաբերող Գօշի ձեւակերպման հետ. «[...] մի՛ ամբոխ լիցի *խռովութեան* [...]» (չեղատառը մերն է): Այս զուգահեռը, լինելով Սեւ լեռան վանքերում Գօշի ստացած ուսման արգասիքը, վկայում է կարգուկանոնի ապահովման սկզբունքի հետ քանտի մասին հատուածի ուղիղ կապի մասին:

տաւորի «սպասաւոր»ների համար նրա անձնական պատասխանատուութիւնը, բ) դատաւորի անզգոյշ ու դիտաւորեալ սխալների տարբերակումը, եւ գ) դատաւորի լիարժէք պատասխանատուութիւնը դիտաւորեալ սխալների համար:

ա) Դատաւորի պատասխանատուութիւն սպասաւորների համար

Տարբեր մօտեցումներ են առկայ այն հարցի շուրջ, թէ Գօշն ո՛ւմ նկատի ունի «յիւրոցն ... յատեմախօսից սպասաւորաց» արտայայտութեամբ. դատական երաստական (կոլեգիալ) կազմը լրացնող 2 կամ 3 փորձառու անձա՞նց, թէ դատարանի ու իր անձնական սպասաւորներին³⁴: Եթէ Ա. խմբագրութիւնն այս հարցում տարժնկալման տեղիք է տալիս, ապա Բ.–ի տեքստում առկայ «[...] որք այնպէս կարող՞ իցեն զի ի դատաստանի խօսիցին» ձեւակերպումը, կարծում ենք, յստակեցնում է Մխիթարի նախնական միտքը. քանի որ դատարանի երաստական (կոլեգիալ) կազմում գործող 2 կամ 3 ատենակալները ի բնէ պէտք է «կարողք» լինէին՝ դատարանի կազմ ընդգրկուելու համար, հետեւաբար այստեղ Գօշը չէր կարող նրանց նկատի ունենալ: Ուրեմն խօսքը վերաբերում է դատաւորի կամ դատարանի՝ հեղինակութիւն ունեցող սպասաւորներին:

Այս ընկալման պայմաններում կարող ենք արձանագրել, որ դատական սպասաւորների համար դատաւորի անձնական պատասխանատուութիւնը սահմանելով՝ Մխիթարը սաղմնային ձեւով արտայայտում է ժամանակակից դատական իրաւունքում արմատաւորուած՝ դատաւորի աշխատակազմի գործունէութեան համար նրա ընդհանուր պատասխանատուութեան գաղափարը³⁵:

34 Օրինակ՝ Ռոբերտ Թոմսոնը՝ համարում է, որ Մխիթար նկատի ունի Նախադրութեան Ե. մասում յիշատակուած «գործակիցներին», այսինքն՝ դատարանի կազմում ընդգրկուած երկու կամ երեք ատենակալներին. տե՛ս *The Lawcode*, նշ. աշխ., 84, ծմք. 116: Բարկէն Յարութիւնեանը նոյնպէս հակուած է այս մօտեցմանը. տե՛ս *Армянский*, նշ. աշխ., 228, ծմք. 5: Իսկ Թորոսեանն այն կարծիքն է յայտնում, որ Գօշը նկատի է ունեցել հէնց դատարանի ծառայողներին, որոնց դատաւորը կարող էր յանձնարարել պարգելու գործի որոշ հանգամանքներ, ապա նրանց հարցաքննել դատարանում. տե՛ս ԹՈՐՈՍԵԱՆ, Խ., *Դատարանն*, նշ. աշխ., 181:

35 Տե՛ս օրինակ ՀՀ դատաւորների ընդհանուր ժողովի 2018ի դեկտեմբերի 21ի թիւ 05-Լ որոշմամբ հաստատուած ՀՀ դատաւորի էթիկայի կանոնները. 6րդ եւ 8րդ կանոններ:

բ) Դատաւորի սխալների տարբերակում

Դատաւորի անզգոյշ ու դիտաւորեալ սխալների տարբերակումը եւ անզգոյշ սխալների համար նրա որեւէ պատասխանատուութեան բացառումը նոյնպէս առաջադիմական բնոյթ է կրում. ներկայումս այն դիտաւոր է որպէս դատաւորի անկախութեան կարեւոր երաշխիք³⁶: Գօշի կողմից այս գաղափարի ձեւակերպումը վկայում է բարձր իրաւական մշակոյթի մասին, քանի որ դատաւորի անձնական պատասխանատուութեան հարցում նա հիմնականում դրսեւորում է ընդգծուած խիստ մօտեցում, եւ այն լեզուի մասնակցութեամբ ու ամրապնդելու համար նա ոչ միայն բերում է սուրբգրային հիմնաւորումներ³⁷, այլեւ որոշակիօրէն խմբագրելով մէջբերումների գրութիւնը՝ դրանք դարձնում է աւելի սուր³⁸:

Որպէս անիրաւ դատաւորի պատասխանատուութեան ձեւ՝ Մխիթարը վկայակոչում է Աստծոյ անխուսափելի դատաստանը: Ժամանակակից մտածողութեան դիտանկիւնից Գօշի մօտեցումն ի հարկէ չի կարող արդիւնաւէտ համարուել, առաւել եւս՝ չի

36 Ի թիւս մեծաթիւ աղբիւրի՝ տե՛ս ՄԱԿ դատաւորների եւ փաստաբանների անկախութեան հարցերով յատուկ զեկուցողի 17.07.2020 թուականի թեմատիկ զեկույցը (ՄԱԿ փաստաթուղթ թիւ A/75/172, <https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/a75172-disciplinary-measures-against-judges-and-use-disguised-sanctions>):

37 Ուշագրաւ է Ամբակում մարգարէի յիշատակումն ու նրա գրքից մէջբերումը, որն ընդհանրապէս չի համընկնում այդ գրքի տառին՝ միաժամանակ, լիովին համապատասխանելով դրա ոգուն: Մեր կարծիքով, «[...] կոչել զԱստուած վրէժխնդիր անիրաւ դատաւորին» ձեւակերպումը Մխիթար կարող էր փոխառած լինել Ներսէս Լամբրոնացուց, որի հեղինակած «Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից» աշխատութեան մէջ կարդում ենք հետեւեալ տողերը. «[...] մարգարէս Ամբակում նստաւ ի մէջ դատաւորացն [...]: Եւ տեսեալ՝ զի էառ կաշառ դատաւորն [...], խրատեաց զնոսա [...], եւ ոչ եղև լսելի: Դարձաւ առ Աստուած եւ թախանձեաց ընդ երկար ժամանակ զարթնուլ ի վրէժխնդրութիւն անիրաւելոցն եւ ի պատուհաս զրկողացն» (շեղատառը մերն է). տե՛ս ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆ-ՆԱՑԻ, *Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից*, Արքահամ Թէրգեանի տպ., Կ. Պոլիս 1825-1826, 137: Զուգահեռն ակնյայտ է: Յաւելնեմ նաեւ, որ ըստ Ներսէսի թողած յիշատակարանի՝ այս գործը գրուել է 1180 թուականին, այսինքն՝ Դատաստանագիրքը գրելու տարեթուից չորս տարի առաջ (տե՛ս Ա.ԿԻՆԵԱՆ, Ն., *Ներսէս Լամբրոնացի արժեպիսկոպոս Տարսննի*, Մխիթարեան տպ., Վիեննա 1956, 152-153). այս պայմաններում Լամբրոնացու աշխատութիւնը Կիլիկիայից ստանալու ու գործածելու վարկածը լիովին իրատեսական է:

կարող համապատասխանել իրաւական պետութեան հիմունքներին: Սակայն Մխիթարի ժամանակներին բնորոշ աշխարհայեացքն ու ընկերային կարգաւորման յօրինուածքը նկատի առնելով՝ Գօշի մօտեցումը հեռու է տարօրինակ լինելուց: Աստծոյ դատաստանի՝ որպէս գերազոյն ատեանի գաղափարը կարմիր թելով անցնում է ողջ դատաստանագրքով³⁸:

Բ.- Զ. ՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

2. Ճառի երկրորդ հատուածում Մխիթարը թուարկում է դատավարութեան կողմերի պարտականութիւնները (մէկ բացառութեամբ՝ բոլորը արգելքների ձեւով), որոնք կոչուած են ապահովել դատական սկզբունքների արդիւնաւէտ կենսագործումը:

Այդ դրոյթները, ըստ բնագրի հերթականութեան, հետեւեալներն են. կողմերը պէտք է ձեռնպահ մնան՝ ա) սուտ վկայութիւն տալուց, բ) հակառակորդի համար տրամաբանական թակարդներ լարելուց գ) «յամառող անիրաւութիւններ» կատարելուց, դ) սուտ վկաներ բերելուց, ե) վարձու ֆարտասաններ ներգրաւելուց, զ) դատարանի առջեւ լեզուակոխ անելուց կամ միմեանց հարուածելուց, է) դատաւորին կաշառելուց, ը) անտեղի երդուելուց, ինչպէս նաեւ թ) անիրաւ վճռի դէպքում պէտք է հատուցումը թողնեն Աստծուն:

1.- Սուտ վկայութիւն

Առաջին արգելքը վերաբերում է դատավարութեան կողմերի սուտ ցուցմունքին՝ որպէս պատշաճ ապացուցման սկզբունքի երաշխիք: Առաջինը հէնց այս արգելքի սահմանումը կարող է վկայել այն մասին, որ եթէ դատաւորների պարագայում Մխիթարն առաջնահերթ խնդիր է դիտում կաշառքը, ապա կողմերի պարագայում՝ սուտ ցուցմունքը: Այս արգելքի ամրապնդման համար Գօշը դիմում է սուրբգրային սարսափազդու մէջբերումների՝ ցոյց տալով, որ ստախոսները Աստծոյ կողմից ենթարկուելու են կործանման: Աւելին, երկնային խիստ պատիժ է խոստացւում անգամ մոլորութեան հետեւանքով սուտ խօսողներին³⁹:

38 Տե՛ս, օրինակ, բուն դատաստանագրքի 1իմ, 2րդ, 18րդ, 38րդ, 82րդ, 139րդ, 246րդ, 249րդ յօդուածները:

39 Բ. խմբագրութիւնը մեղմացնում է այս դրոյթը՝ բնագրից հանելով չարչարանքի (երկնային հատուցման) հեռանկարը:

2.- Մոլորեցնող թակարդներ

Հակառակորդի համար տրամաբանական թակարդներ լարելու արգելքը նույնպես վերաբերում է պատշաճ ապացուցման տիրոջ-թին, սակայն ժամանակակից իրաւաբանութեան աչքերում այն անհասկանալի է թւում. աւելին, առկայ է առերեւոյթ հակասութիւն ներկայիս դատավարական իրաւունքում մեծ տեղ ունեցող «խաչածնի հարցաքննութեան» գաղափարի հետ⁴⁰: Սակայն ըստ ամենայնի՝ Մխիթարը նկատի ունի ճիշտ ցուցմունք տուող անձին մոլորեցնելու իրավիճակը, եւ նրա բուն նպատակը սխալական կողմին սաստելն ու ճշմարտութեան ուղի վերադարձնելն է. դա է վկայում նրա նախորդող միտքը, ինչպէս նաեւ սուրբգրային մէջբերումը, քանի որ «փոս փորողի» փոխաբերութիւնն ակնյայտօրէն ունի բացասական երանգաւորում: Աւելին, եթէ Գօշն անընդունելի համարեր «խաչածնի հարցաքննութիւնը» ինքնին, ապա չէր կարող միաժամանակ դրական գնահատել Դանիէլ մարգարէի դատը⁴¹:

3.- Յաղթասէր անիրաւութիւն

Երրորդ արգելքն առաւել ընդհանրական բնոյթ է կրում, եւ այն կոչուած է երաշխաւորելու ոչ միայն պատշաճ ապացուցման, այլեւ անկաշառութեան, երկու կողմերին լսելու, կարգուկանոնի ապահովման սկզբունքները: «Յաղթասէր անիրաւութիւն» եզրոյթը շատ դիպուկ է արտայայտում Մխիթարի բարձրացրած խնդիրը. դատարանում ամէն գնով յաղթանակի հասնելու մոլուցքն անընդունելի վարքագիծ է, քանի որ մի դէպքում այն յանգեցնելու է երկնային դատաստանի, իսկ միւս դէպքում՝ հանրային պարսաւանքի:

4.- Սուտ վկաներ

Չորրորդ արգելքը նույնպէս յանգում է պատշաճ ապացուցման տիրոջ-թին. եթէ առաջին արգելքն կոչուած է ապահովելու անձամբ կողմերի ցուցմունքի որակը, ապա չորրորդի առարկան նրանց ներկայացրած վկաների ցուցմունքն է:

5.- Վարձու նարտասաններ

Հինգերորդ արգելքը ժամանակակից հայեացքով առաւել տարօրինակն ու անընդունելին է. թւում է թէ Մխիթարը լիովին

40 Այն մուծուել է նաեւ ՀՀ քրեադատավարական իրաւունք. տե՛ս ՀՀ ՔրԴՕ 326րդ յօդուածը:

41 Դանիէլ մարգարէի դատին Միթթարն անդրադառնում է Նախադրութեան Բ., Դ. եւ Ե. ճառերում:

մերժելի է համարում փաստաբանութեան գաղափարն ինքնին: Մեր կարծիքով, սակայն, նման պնդումն ընդունելի է միայն որոշակի վերապահումներով: Գօշի նախագծած դատավարութեան տրամաբանութեանը ու յատկապէս ապացուցողական համակարգին ի հարկէ խորթ է առեանում փաստարկելու համար վարձատրութիւն ստանալը, սակայն հիմքեր չկան պնդելու, որ նոյն բանն առանց վարձատրութեան կատարելը նոյնպէս անթոյլատրելի է. այդպիսի առաքելութիւն ստանձնած՝ ներկայիս ընկալմամբ «Իրաւապաշտպանը» լիովին կարող էր օգտուել վկայի լայն կարգավիճակից: Բացի այդ, քննարկուող դրոյթը համադրելով դատաւորներին ուղղուած՝ «յիւրոցն [...] յատենախօսից սպասաւորաց» զգուշանալու մասին յորդորին՝ կարող ենք ենթադրել, որ Մխիթարի մտայղացմամբ՝ այս արգելքը պէտք է առաջին հերթին ծառայէր որպէս դատաւորի անձնական պատասխանատուութեան սկզբունքի երաշխիք⁴²:

6.- Լեզուակոխ եւ քաշշուի

Վեցերորդ արգելքը վերաբերում է դատարանի առջեւ լեզուակռուին ու ծեծկռուքին՝ որպէս կարգուկանոնի ապահովման սկզբունքի երաշխիք:

7.- Կաշառք

Եօթերորդ արգելքը, որպէս անկաշառութեան սկզբունքի երաշխիք, կողմերին պարտաւորեցնում է ձեռնպահ մնալ դատաւորին կաշառելուց: Մխիթարն այս արգելքը կապում է մէկ ուրիշին՝ զրկանքի ենթարկելու՝ կողմի մտադրութեան հետ եւ այդ լոյսի ներքոյ պարսաւանքի է ենթարկում փողասիրութիւնը՝ վկայակոչելով Պօղոս առաքեալի խօսքը: Այնուհետեւ խնդիրն աւելի լայն է դիտարկւում, եւ քրիստոնէական խոնարհութեան ընդհանուր գաղափարի ներքոյ՝ ձեւակերպւում է այն միտքը, որ աւելի լաւ է

42 Գօշի օրօք հայկական իրականութեան մէջ անկախ փաստաբանական հաստատութիւն գոյութիւն ունենալ չէր կարող, իսկ փաստարկման հմտութիւններ ու իրաւական գիտելիքներ ունեցող մարդիկ պէտք է որ դատաւորների կողմից այս կամ այն կերպ ներգրաւուած լինէին դատական գործին: Այլապէս Նախադրութեան է. հառում մա չէր գրի. «[...] զի ոչ ոք է ի մեզ ըստ արտաքինաց վարժեալ իմաստութեամբ յաշխարհականաց ոք է ի մեզ ըստ արտաքինաց վարժեալ իմաստութեամբ յաշխարհականաց [...]»: Աւելին, Մխիթարի ժամանակներում լայնօրէն տարածուած էր այն կարծրատիպը, որ վարձու «ատենախօսները» կոչուած են ստով յաղթել նշմարտութեանը:

զրկանքի ենթարկուել, քան ենթարկել: Պօղոս ու Պետրոս առաքելներին զրուածքներից մէջբերուած եւ կանոնական իրաւունք մուծուած այս միտքը կարծէք թէ նախապատրաստում է այս ճառում կողմերին ուղղուած վերջին յորդորը:

8.- Անտեղի երդում

Ութերորդ արգելքը վերաբերում է չպահանջուած երդումներին՝ որպէս պատշաճ ապացուցման սկզբունքի երաշխիք: Այստեղ եւս սուրբգրային մէջբերումների օգնութեամբ Մխիթարը փորձում է կանխարգելել կողմերի անթոյլատրելի վարքագիծը:

9.- Անիրաւ վնդի հատուցումը թողնել Աստծուն

Իններորդ ցուցումը միակն է, որ ունի ոչ թէ արգելքի, այլ յորդորի ձեւ. քրիստոնէական խոնարհութեան գաղափարից ելնելով՝ Գօշը դատարանում անարդարացիօրէն պարտուած ու զրկանքի ենթարկուած անձանց կոչ է անում իրենց հանդէպ անիրաւութիւն կատարելու համար դատաստանը թողնել Աստծուն: Հետեւապէս, այս ցուցումը «թղթակցում է» դատաւորի անճակամ պատասխանատուութեան սկզբունքին: Մեր կարծիքով, այս դրոյթը ո՛չ բացառում է դատական վերանայման գաղափարը⁴³, ո՛չ էլ՝ «երկրային» դատարանի առջեւ անիրաւ դատաւորների պատասխանատուութիւնը⁴⁴. այստեղ Մխիթարն այդ հարցերը պարզապէս լռութեան է մատնում: Այս դրոյթի բուն նպատակն առաւելապէս գործնական տիրոյթում է. հայ-քրիստոնեաներին զերծ պահել անհատ դատաւորների կողմից անխուսափելիօրէն կատարուող ու կատարուելիք անիրաւութիւնների պատճառով հաւատը կորցնելուց եւ օտարների դատարաններին դիմելուց⁴⁵:

43 Նման կարծիք են յայտնել Վ. Բաստամեանցը (ԲԱՍՏԱՄԵԱՆՑ, Վ., Մխիթարայ, մշ. աշխ., 149-150) եւ Խ. Սամուէլեանը (ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, Խ., Մխիթար, մշ. աշխ., 150-151): Մինչդեռ Խ. Թորոսեանը փաստարկուած ձեւով հերքում է այդ տեսակետը (տե՛ս ԹՈՐՈՍԵԱՆ, Խ., Դատարանը, մշ. աշխ., 111-116):

44 Տե՛ս օրինակ բուն դատաստանագրքի 39րդ յօդուածը. մէջբերելով կանոնական իրաւունքի մի դրոյթ՝ Մխիթար դրան տալիս է հետեւեալ ընդհանրական մեկնաբանութիւնը. «Ահաւասիկ յանդիմանեմ քամբաստող գեկեղեցի, թէ դատաստան ոչ ունի, [...] զի եւ գդատաւորս հրամայեն դատել զանիրաւս, [...]»: Ըստ որում եւ մեզ յայժ ի դէպ է վարիլ եւ մի՛ այլագգ ինչ» (շեղատառը մերն է):

45 Գօշն ուղիղ յայտարարում է այս գերիխնդրի մասին նախադրութեան Ա. եւ Բ. մատերում, իսկ Թ. մատում դրան անդրադառնում է հանգամանօրէն:

* * *

Ամփոփելով պէտք է նշենք, որ ունենալով հսկայական մատենագրական ժառանգութիւն՝ մենք այսօր ակնյայտօրէն կարիք ունենք այն հանրահռչակելու եւ կիրառելի դարձնելու նորովի՝ ԻԱ. դարին բնորոշ մեթոտաբանութեամբ: Այս ելակէտի հիման վրայ, մեր ուսումնասիրութեան առանցքում ունենալով Մխիթար Գօշի «Դատաստանագիրք»ը, կ'ուզենայինք ուշադրութիւն հրաւիրել մի քանի մեթոտական ուղենիշների վրայ՝ ա) տեսականի ու կիրառականի, պատմականի ու արդիականի, հոգեւորի ու աշխարհիկի համադրում, բ) ընթերցողի ընկալումների հաշուառմամբ՝ Գօշի եզրաբանութեան ու գաղափարաբանութեան, մտայղացումների ու որոնումների պարզաբանում, գ) նիւթի մատչելի համակարգում, դ) ճանաչողութեան Գօշի դիտանկեան կառուցում ու փոխանցում ընթերցողին, է) ուղղահայեաց (ժամանակագրական) ու հորիզոնական (տարածական) զուգահեռների որոնում, վերհանում ու փոխանցում ընթերցողին, զ) Գօշի՝ որպէս մտածողի ու գործչի կենդանի կերպարի ուրուագծում:

«Կիրառական Գօշագիտութեան» այս մեթոտական հէնքի փորձարկման ու սրբագրման արդիւնքում ակնկալում ենք աւարտին հասցնել, նախ, դատաստանագրքի նախադրութեան, ապա եւ բուն դատաստանագրքի ամբողջական մեկնաբանումը:

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔԵԱՆ

Summary

NEW HORIZONS OF MKHITAR GOSH STUDIES: ON THE EXAMPLE OF CHAPTER VI OF MKHITAR'S OWN INTRODUCTION TO HIS LAWCODE

RUBEN MELIKYAN

The author suggests a fresh look to the Mkhitar Gosh studies (as a part of Armenian studies) aiming to make Mkhitar Gosh (XII-XIII centuries) and his main work – the Armenian Lawcode – closer and more understandable to the contemporary professional community, as well as the broader public. As an example of the alleged attainment of that goal the author suggests a Commentary to the Chapter VI of Mkhitar's own introduction to his Lawcode. The methodology of the Commentary includes drawing parallels between Gosh's juridical ideas and contemporary legal concepts, as well as casting light to the larger context of Gosh's time and work. In particular, the author demonstrates that certain legislative techniques used by Mkhitar Gosh in XII century are still actual; he efforts to explain terminology used by Gosh within the modern juridical apparatus; he attempts to reveal the roots of legal mentality patterns in medieval Armenia. In search of Cilician influence over Mkhitar Gosh, the author brings examples of his use of certain ideas by Cilician Armenian authors (e.g., Archbishop Nerses of Lambron and Ignatius of Sev Ler). As a conclusion, the author voices the need for a new wave of Mkhitar Gosh studies focusing at the practical and actual issues.